ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 11.09.2020թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/194

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Աբամա թրեյդ» ՍՊԸ-ի տնօրեն Է.Փոթոյանի (պետական գրանցման վկայական թիվ 273.110.1125342),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 20.08.2020թ. թիվ 26/26-1/12445-2020 գրությամբ «Աբամա թրեյդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը «Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» ՀՈԱԿ-ի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 17.08.2020թ. գրության հիման վրա 20.08.2020թ. թիվ 26/26-1/12445-2020 գրությամբ նախաձեռնել է «Աբամա թրեյդ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Աբամա թրեյդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«Աբամա թրեյդ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 29.08.2020թ. գրությամբ հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

«Սույն թվականի մայիսի 13-ին «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ն մասնակցել է «Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» ՀՈԱԿ-ի կողմից հայտարարված «ԹԿՎԿ-ԳՀԱՊՁԲ-2020/7» ծածկագրով գնանշման հարցմանը և պայմանագիր է կնքել 3-րդ չափաբաժնի մասով՝ կատաղության դեմ պատվաստանյութ:

Սակայն, կապված աշխարհում ստեղծված կորոնավիրուսի համավարակի հետ, ինչպես բոլոր արտադրողների մոտ, մեր արտադրողի մոտ նույնպես ի հայտ եկան խնդիրներ, ինչի պատճառով էլ հնարավոր չեղավ պատվաստանյութը մատակարարել սեղմ ժամկետներում: Պայմանագրի շրջանակում ապրանքի մատակարարման ուշացման պատճառը եղել է մեր կամքից և հնարավորություններից դուրս և մեր կազմակերպությունը որևէ կերպ չի կարողացել հակազդել ստեղծված իրավիճակին:

Հաշվի առնելով վերոնշյալ փաստերը՝ խնդրում ենք Ձեզ չբավարարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնած ընթացակարգը և «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ին չներառել Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

«Աբամա թրեյդ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/194 ընթացակարգի շրջանակներում 04.09.2020թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր տնօրենի մասնակցությունը, ով իր հերթին պնդել է վերը շարադրված դիրքորոշումը, ինպես նաև հայտնել է :

3. «Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» ՀՈԱԿ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» ՀՈԱԿ-ը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 17.08.2020թ. գրությամբ հայտնել է, որ «Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» ՀՈԱԿ-ի և «Աբամա թրեյդ» ՍՊԸ-ի միջև 10.06.2020թ. կնքված թիվ «ԹԿՎԿ-ԳՀԱՊՁԲ-2020/7-10» պայմանագրի (հետայսու նաև՝ Պայմանագիր) համաձայն, Վաճառողը՝ «Աբամա թրեյդ» ՍՊԸ-ն, ստանձնել է «Թափառող

կենդանիների վնասազերծման կենտրոն» ՀՈԱԿ-ին կատաղության դեմ պատվաստանյութ մատակարարելու պարտավորություն:

«ԹԿՎԿ-ԳՀԱՊՁԲ-2020/7-10» պայմանագիրն ուժի մեջ է մտել 23.06.2020թ. կողմերի միջև կնքված թիվ 1 Համաձայնագրով, որով ապրանքի մատակարարման վերջնաժամկետ է սահմանվել 28.07.2020թ. /25 աշխատանքային օր/, սակայն Վաճառողը սահմանված ժամկետում որևէ ապրանք չի մատակարարել:

Հաշվի առնելով, որ «Աբամա թրեյդ» ՍՊԸ-ն մինչ 11.08.2020թ. չի կատարել Պայմանագրով ստանձնած պարտավորությունները և Պատվիրատուին չի մատակարարել նախատեսված ապրանքը, Պատվիրատուն, հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետը և 2.1.7.1 կետի բ) ենթակետը, Պայմանագիրը միակողմանի լրիվ /ամբողջությամբ/ լուծել է:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/194 ընթացակարգի շրջանակներում 04.09.2020թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2020/194 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/194 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» ՀՈԱԿ-ի և «Աբամա թրեյդ» ՍՊԸ-ի միջև 10.06.2020թ. կնքվել է «ԹԿՎԿ-ԳՀԱՊՁԲ-2020/7-10» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ «Աբամա թրեյդ» ՍՊԸ-ն պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պայմանագրին կից Հավելված 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, սահմանվել է, որ 3050 սրվակ «կատաղության դեմ պատվաստանյութ» ապրանքատեսակը պետք է մատակարարվի պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 25 աշխատանքային օրվա ընթացքում:

3. «Աբամա թրեյդ» ՍՊԸ-ին ուղղված 11.08.2020թ. ծանուցմամբ Պատվիրատուն հայտնել է, որ «Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» ՀՈԱԿ-ի և «Աբամա

թրեյդ» ՍՊԸ-ի միջև 10.06.2020թ. կնքված «ԹԿՎԿ-ԳՀԱՊՁԲ-2020/7-10» ծածկագրով պայմանագրի համաձայն՝ Վաճառողը՝ «Աբամա թրեյդ» ՍՊԸ-ն ստանձնել է «Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» ՀՈԱԿ-ին կատաղության դեմ պատվաստանյութ մատակարարելու պարտավորություն:

Հաշվի առնելով, որ «Աբամա թրեյդ» ՍՊԸ-ն մինչ 11.08.2020թ. չի կատարել ստանձնած պարտավորությունները և Պատվիրատուին չի մատակարարել նախատեսված ապրանքը, Պատվիրատուն հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետը և 2.1.7.1 կետի բ) ենթակետը, միակողմանի լուծել է Պայմանագիրը:

4. Պատվիրատուն տեղեկագրում 12.08.2020թ. հրապարակել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 20.08.2020թ. թիվ 26/26-1/12445-2020 գրությունը, «Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» ՀՈԱԿ-ի 17.08.2020թ. գրությունը և կից փաստաթղթերը, ինչպես նաև «Աբամա թրեյդ» ՍՊԸ-ի դիրքորոշումը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների

ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, «Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» ՀՈԱԿ-ի և «Աբամա թրեյդ» ՍՊԸ-ի միջև 10.06.2020թ. կնքվել է «ԹԿՎԿ-ԳՀԱՊՁԲ-2020/7-10» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ «Աբամա թրեյդ» ՍՊԸ-ն պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրին կից Հավելված 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, սահմանվել է, որ 3050 սրվակ «կատաղության դեմ պատվաստանյութ» ապրանքատեսակը պետք է մատակարարվի պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 25 աշխատանքային օրվա ընթացքում:

Պայմանագրի 8.1 կետի համաձայն՝ Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Հաշվի առնելով, որ «Աբամա թրեյդ» ՍՊԸ-ն մինչ 11.08.2020թ. չի կատարել ստանձնած պարտավորությունները և Պատվիրատուին չի մատակարարել նախատեսված ապրանքը, Պատվիրատուն հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետը և 2.1.7.1 կետի բ) ենթակետը, միակողմանի լուծել է Պայմանագիրը և տեղեկագրում 12.08.2020թ. հրապարակել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում 12.08.2020թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:***

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի համաձայն՝ վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) Մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

<u>բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի պահանջով Ընկերության կողմից, որպես դիրքորոշման լրացուցիչ հիմնավորում ապրանքի չմատակարարելու վերաբերյալ ներկայացվել է 19.05.2020թ. ստացված էլեկտրոնային հաղորդագրությունը ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Այս դեպքում ստիպված եք սպասել նոր խմբաքանակի, որը թողարկվելու է օգստոսի վերջին-սեպտեմբերի սկզբին…

Հարգանքով՝ վաճառքի բաժնի գլխավոր մենեջեր»:

Ընկերության կողմից որպես հիմնավորում, որ օբյեկտիվ և «Աբամա թրեյդ» ՍՊԸ-ի կամքից անկախ հանգամանքներով պայմանավորված է եղել ապրանքի Պայմանագրով

սահմանված ժամկետում չմատակարարելը, ներկայացված սույն անորոշ հաղորդագրությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից չի կարող ընդունվել որպես բավարար ապացույց:

Հարկ եմ համարում արձանագրել, որ որպես լրացուցիչ հիմնավորում ներկայացված 19.05.2020թ. էլեկտրոնային հաղորդագրությունը ստացվել է դեռևս մինչ «ԹԿՎԿ-ԳՀԱՊՁԲ-2020/7-10» ծածկագրով պայմանագիր կնքելը. «ԹԿՎԿ-ԳՀԱՊՁԲ-2020/7-10» ծածկագրով պայմանագիրը կնքվել է 10.06.2020թ., հետևաբար, թե ինչ մատակարարումների է վերաբերում վերոնշյալ հաղորդագրությունը, այս իմաստով ևս անորոշ է, իսկ եթե ենթադրենք, որ դեռևս չկնքված «ԹԿՎԿ-ԳՀԱՊՁԲ-2020/7-10» պայմանագրին է վերաբերում, ապա ստացվում է, որ մինչև Պայմանագրի կնքելն արդեն իսկ Ընկերությունը տեղյակ է եղել, որ որպես գործընկեր ներկայացված անձի հետ աշխատելու պայմաններում Պայմանագրով նախատեսված ժամկետներում ապրանքի մատակարարումն իրականացնելն անհնար է լինելու:

Այսպիսով՝ Ընկերությունը 10.06.2020թ. կնքված «ԹԿՎԿ-ԳՀԱՊՁԲ-2020/7-10» ծածկագրով պայմանագրի շրջանակներում պարտավորվել է Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 25 աշխատանքային օրվա ընթացքում մատակարարել 3050 սրվակ «կատաղության դեմ պատվաստանյութ» ապրանքատեսակը, որն ուժի մեջ է մտել Կողմերի ստորագրման պահից, սակայն 11.08.2020թ. դրությամբ մատակարարում չի կատարել, ինչն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծմանը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 20.08.2020թ. թիվ 26/26-1/12445-2020 գրությամբ «Աբամա թրեյդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին

մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Աբամա թրեյդ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**